

HSBC-ն նշանակում է նոր գլխավոր գործադիր տնօրեն Հայաստանում

HSBC-ն հայտարարել է Իրինա Սեյլանյանի՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC Հայաստան) գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնում նշանակման մասին: Նա իր պարտականությունները կստանձնի 2020թ. մարտի 2-ից: Նշանակումը ենթակա է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գրանցման: Իրինա Սեյլանյանը հաջորդում է Փոլ Էդգարին, ով նոր պաշտոն է ստանձնելու HSBC Խմբում:

HSBC-ին միանալով 1997թ.-ին՝ Իրինան ներկայումս զբաղեցնում է HSBC Մալթայի ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի տնօրենի, ինչպես նաև HSBC Հայաստանի և HSBC ասեթ մենեջմենթ (Մալթա) խորհրդի անդամի պաշտոնները: Նախկինում նա զբաղեցրել է ղեկավար պաշտոններ HSBC Խմբում, ներառյալ՝ HSBC գլխամասային գրասենյակի առևտրավարկային դեպարտամենտի համապատասխանության ռիսկերի ծրագրերի ղեկավարի, HSBC Հայաստանում՝ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի և ֆինանսական շուկաներում գործառնությունների դեպարտամենտի տնօրենի պաշտոնները:

HSBC Խմբի Եվրոպայի տարածաշրջանի միջազգային գլխավոր գործադիր տնօրեն Քրիս Դեյվիսը նշել է. «Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Փոլ Էդգարին Հայաստանում իրականացվող աշխատանքներում զգալի ներդրում կատարելու համար: Նրա առաջնորդությամբ Բանկը ծավալել է հաջող գործունեություն՝ շարունակելով սպասարկել մեր հաճախորդներին և առաջ տանելով կազմակերպության առաջնահերթությունները: Սիրով ողջունում եմ Իրինա Սեյլանյանին HSBC Հայաստան վերադառնալու կապակցությամբ: Ունենալով ավելի քան 20 տարիների փորձ Հայաստանի և միջազգային բանկային համակարգում՝ նա հրաշալի ղեկավար է հայաստանյան բիզնեսի համար»:

Իրինա Սեյլանյանը նշել է. «Մեծ ոգևորությամբ եմ վերադառնում Հայաստան՝ Բանկի ղեկավարությունը ստանձնելու, ինչպես նաև մեր հայ և միջազգային հաճախորդների հետ աշխատանքները շարունակելու համար: Մենք պատրաստվում ենք էլ առավել խորացնել մեր հայաստանյան և միջազգային արհեստավարժ թիմերի միջև համագործակցությունը ի նպաստ մեր հաճախորդների բիզնես շահերի»:

HSBC Խումբ

HSBC Holdings plc-ը՝ HSBC Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում: Խումբը ծառայություններ է տրամադրում 65 երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում: HSBC-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր և հզոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները 2019թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել են 2,751 միլիարդ ԱՄՆ դոլար:

HSBC Հայաստան

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ը հիմնադրվել է 1996թ.-ին: Բանկը համատեղ ձեռնարկություն է, որի 70%-ը պատկանում է HSBC Խմբին, իսկ 30%-ը՝ արտերկրի հայ գործարարի: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ 30 000 հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր 8 գրասենյակների և մոտ 392 աշխատակիցների միջոցով: 2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են 268 միլիարդ ՀՀ դրամ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ ՓԲԸ-ի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը: